ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«20» «հոկտեմբերի» 2020թ. № 406-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի
N 190-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով վարչապետի 2020 թվականի հոկտեմբերի 12-ի N 1144-Ա որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2019 թվականի հունիսի 24-ի ««Արթիկ քաղաքի փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում» դրամաշնորհային ծրագրի կառավարման խորհուրդ ստեղծելու, խորհրդի գործունեության կանոնակարգն ու անհատական կազմը հաստատելու մասին» N 190-Ա հրամանի N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. N2 հավելվածի 24-րդ կետի «շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի նախարարի տեղակալ» բառերով:

ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

10/20/2020

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«20» հոկտեմբերի 2020թ.
ք. Երևան

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
2020թ. հոկտեմբերի «20» -ի N 406-Ա հրամանի

«Հավելված N 1
շրջակա միջավայրի նախարարի
2019 թ.հունիսի «24»-ի N 190-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ա. Մազմանյան	շրջակա միջավայրի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ)
Գ. Երիցյան	շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն (խորհրդի քարտուղար)
Ա. Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար
Ս. Մաթիլյան	շրջակա միջավայրի նախարարության լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության ջրօգտագործման թույլտվությունների բաժնի պետի պարտականությունները կատարող
Ի. Հակոբյան	շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Լ. Ազիզյան	շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար
Շ. Քերոբյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի գործակալության պետի պաշտոնակատար (համաձայնությամբ)
Վ. Գրիգորյան	Շիրակի մարզպետի տեղակալ (համաձայնությամբ)
Գ. Փթուկյան	Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական (համաձայնությամբ)
Լ. Պալյան	Քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության քաղաքաշինության և տարածական պլանավորումների բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)»